ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

✉ 2801. ՀՀ Շիրակի մարզ, գ. Աշոցք, Հրապարակ 1
☎ (0245) 2-10-50, 2-14-82
E-mail: ashotsq.shirak@mta.gov.am

13 օգոստոսի 2020թ.
N 403

«ԳԱՐԱՆՏ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Ա. ԱՍԼԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ասլանյան

ՀՀ Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանի և «ԳԱՐԱՆՏ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ի միջև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն 2019թ. դեկտեմբերի 9-ին կնքվել է «Աշոցքի համայնքապետարանի կարիքների համար ներքին աուդիտի ծառայությունների մատուցման պետական գնման» N ԱՀ-ԳՀԱԾՁԲ-20/1 պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր):

Պայմանագրի 6-րդ կետը սահմանում է. «Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին»:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ Աշոցքի համայնքապետարանը, հիմք ընդունելով պայմանագրի 6-րդ կետը, 2020թ. օգոստոսի 17-ին միակողմանի լուծելու է N ԱՀ-ԳՀԱԾՁԲ-20/1 պայմանագիրը:

Հարգանքով՝

Համայնքի ղեկավար Կ. Մանուկյան